ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2015թվականի N 09

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի Ապրիլի 14-ի թիվ 03 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ — Կողմ -7 — Դեմ -0 — Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ
4. ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ
6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ
7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 03

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ 09 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14- Ի ԹԻՎ 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 03 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

3.«ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ »ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

/

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2015թվականի N 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի հինգերորդ մասով,«Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 20 որոշումը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի «բամբակաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 20 որոշումը:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի «Բամբակաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը `համաձայն հավելվածի:

3.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ /Ա.Եղիազարյանին/ սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ Կողմ -7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ

3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ

4. ԶՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ

5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ

6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ

7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

Արմավիրի մարզի Բամբակաշատ

Համայնքի ավագանու

14.04.2015թ. N. 10 որոշմամբ

<< Արմավիրի մարզի ԲԱՄԲԱԿԱՇԱՏ

Համայնքի ղեկավար՝

Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Կազմվեց՝ 14.04. 2015թ.-ին 7 թերթից

տպագրված է ընդամենը 8 օրինակ

Օրինակ 1

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության արդարադատության

նախարարության աշխատակազմի իրավաբանական

անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից

27 04 2015 թվականին

Գրանցման թիվ 83.215.854963

Վկայական 03K004963

ՀՎՀՀ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի
ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ << ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի <<Բամբակաշատի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ հաստատություն/ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
2. Հաստատությունը ստեղծվել է 2015 թվականի ապրիլի 14-ին,Բամբակաշատ գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 20 որոշմամբ:
3. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
4. Հաստատությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքում:
5. Հաստատությունը որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:
7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
8. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

[illegible] Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության [illegible]:

[illegible] Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում [illegible] նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու [illegible], առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվել և դրա [illegible] վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների [illegible], վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, [illegible] և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, [illegible] և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և [illegible] զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և [illegible]ների ծանոթացումը, զարգացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, [illegible] ուսուցման նախապատրաստումը:

[illegible] Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, [illegible]ության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ [illegible], ինքնավարության, կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական [illegible]ներին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման [illegible]ներին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման [illegible]ների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության [illegible] համար:

[illegible] Հաստատությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Հաստատության երեխաների համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը [illegible] պետական կրթական չափորոշիչներով:

17. Հաստատություն ընդունվում են մինչև 5 տարեկան երեխաները՝ առողջության մասին բժշկական [illegible]ի հիման վրա:

18. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության /այսուհետ՝ նախարարություն/ կողմից [illegible]ված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Հաստատություններն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան [illegible]վում են հետևյալ տեսակների՝

1) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը

2) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման շեղումների շտկման [illegible]ների գերակայությամբ

3) առողջարանային մանկապարտեզ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ և առողջապահական [illegible]ների գերակայությամբ

4) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր և [illegible]ական ծառայություններ

5) համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր

6) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական և այլ մակարդակի կրթական [illegible] իրականացնող մի քանի հաստատություններ

7) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես [illegible], անբարենպաստ ընտանիքների մինչև 5 տարեկան երեխաների խնամքը, [illegible]ությունը և ուսուցումը:

20. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Թույլատրվում է հաստատության կամ [illegible] խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային երեկոյան

[illegible], շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը [illegible]ություն:

[illegible]. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստատության [illegible]ային բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ [illegible]խանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, [illegible]նարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի [illegible]ման և սննդի որակի համար:

[illegible]. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին [illegible]բերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

[illegible]. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները [illegible]ական ներկայացուցիչները/, մանկավարժական աշխատողները:

[illegible]. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին [illegible]ական ներկայացուցիչներին/ ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք [illegible]նակարգում են հաստատության գործունեությունը:

[illegible]. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված [illegible]մանագրով:

[illegible]. Երեխայի և հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են [illegible]համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

[illegible]. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության [illegible]հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական –մանկավարժական որակավորում:

29. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները [illegible]ոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

30. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը /այսուհետ՝ տնօրեն/:

32. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող [illegible]ված հարց վերջնական լուծելու իրավունք բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) [illegible]ավելացնու համաձայնությամբ հաստատության հիմնադրումը

2) հաստատության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող [illegible]ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը

3) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և /կամ/ ամրացվող՝ համայնքին [illegible] գույքի կազմի հաստատումը

4) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը

5) հաստատության կառավարման համակարգի սահմանումը

6) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը

7) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ [illegible]ների լուծումը:

34. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում [illegible] բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ [illegible]ատշաճ կատարման համար:

35. Համայնքի ղեկավարը՝

1) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման [illegible]ների ձևավորումը և նրանց լիազորությունների մասնաժամանակ դադարեցումը

վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ
կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները
լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության ստուգման արդյունքները
վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ
համայնքի ավագանու որոշմամբ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար
հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը
իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
36. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:
37. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
38. Տնօրենը՝
1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ
2) սահմանում է հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները, նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.
8) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.
10) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
11) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
12) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.
13) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմինների չվերապահված այլ լիազորություններ:
39. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման /հրամանի/ համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:
40. Մեթոդիստը /տնօրենի ուսումնական գծով տեղակալը/
1) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը
2) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը,
3) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար,

զմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը
ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն
դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նոր տեսություններին, ծանոթացնում է մեթոդական հանձնարարականներին
զմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:
Դաստիարակը՝
պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը,
պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար
մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
Երաժշտական ղեկավարը՝
տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը
ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.
Տնտեսական մասի վարիչը /տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը/
կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և արքավորումների ստացումն ու պահպանությունը
մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար
պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական արգապահության համար:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:
. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում միայն դատական կարգով:
. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն հարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, վճռանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնի ավագանին:
. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գալիս են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված աղբյուրներից:

. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.

ադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած ները

արեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի պետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները. յաստանի Հանրապետության օրենսդրությամն չարգելված և հաստատության կանոնադրական ներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների աստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/՝ Հայաստանի Հանրապետության սդրությամբ սահմանված կարգով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության ենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2015թվականի N 11

«ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն 2015 թվականի Ապրիլի 15-ից Լաուրա Հենրիկի Եղիազարյանին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի «Բամբակաշատի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու համար:

2.Առաջարկել համայնքի ղեկավար /Ա.Եղիազարյան/ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ Կողմ -7 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ
4. ԶՐԱՂԱՑՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ
6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ
7. ՏԵՐ-ԳԵՂԱՍՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2015թվականի N 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ«ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի «Բամբակաշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	Կողմ -7	Դեմ-0	Ձեռնպահ-0
1. ԱԼՈՅԱՆ ՎԼԱԴԻԿ			
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԶԱՎԵՆ			
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՆՈՐԱՅՐ			
4. ԶՐԱՂԱՅՊԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ			
5. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԳՈՌ			
6. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐՏԻԿ			
7. ՏԵՐ-ԳԵՂԱՄՅԱՆ ԳԵՂԱՄ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 14-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ

<<ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

1. Աշխատակիցների քանակը՝ 15
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

Հ/Հ	Աշխատակիցների քանակ	Պաշտոնի անվանումը	Դրույքը	Պաշտոնային դրույքաչափ
1	1	Տնօրեն	1	100000
2	1	Գլխավոր հաշվապահ	0.5	95000
3	1	Դաստիարակ	0.56	92600
4	1	Դաստիարակ	0.56	92600
5	1	Դաստիարակ	0.56	92600
6	1	Դաստիարակ	0.56	92600
7	1	Դաստիարակի օգնական	0.5	72000
8	1	Դաստիարակի օգնական	0.5	72000
9	1	Դաստիարակի օգնական	0.5	72000
10	1	Դաստիարակի օգնական	0.5	72000
11	1	Տնտեսվար	0.5	67000
12	1	Խոհարար	1	72000
13	1	Խոհարարի օգնական	0.5	67000
14	1	Լվացարար	0.75	72000
15	1	Հավաքարար	1	67000
Ընդամենը 15				

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ